ԱՐՑԱԽԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐՆ Է

Հարցազրույց ՀՀ ԳԽ Պատգամատոր Վիգէն Շիրինեանի Հետ

44 տարեկան է, Պատգամատոր է ընտրուել Արցախի Մարտակերտի շրջանից, Աշխատել է որպէս ջեռուցման ցանցերի եւ կաթսայատան տեղակայումների Մարտակերտի տեղամասի պետ, Ներկայումս աշխատում է «Անկախ պետականութեան եւ ազգային քաղաքականութեան հարցերի յանձնաժողովում»

Հարց.- Ինչպէ՞ս կը բնութագրէք Արցախի ներկայ կացութիւնը:

Պատ.- Արցախը կարելի է համարել 3 տիրոջ ծառայ: Հիմնական տէրը Մոսկուան է, երկրորդ տէրը՝ Ադրբեջանը, երրորդը՝ յաւակնեց տէր դառնալ Հայաստանը, որը յետոյ հրաժարուեց: Եւ ակամայ ընտացուեց այնպէս, որ իրենից հրաժարուած տիրոջ պատճառով Արցախը տուժում է, որպէս ծառայ, որովհետեւ նրան աւելի հեշտ է խփելը, քան տիրոջը:

Հարց.- Հայաստանի իշխանութիւնները կարո՞ղ էին ինչ-որ բան անել վիճակը շտկելու իմաստով, որ չարեցին:

Պատ.- Այո, կարող էին ոչ միայն ինչ-որ բան շտկել, այլեւ լուծել հիմնահարցը: Գաղտնիք չէ, որ Արցախի հարցը բարձրացրել է Մոսկուան, այնպէս, ինչպէս զազաուզների, մեսխեթցիների եւ էլի ուրիշների հարցը: Մեր դէպքում պատճառը եղել է այն, որ վերակառուցման շրջանում շրջաններից ազատուող հանրապետութիւնները կը ձգտէին Միութիւնից դուրս ցատկել, Ադրբեջանն էլ այս իմաստով ամենահաւանական թեկնածուներից մէկն էր: Բայց իր հաշիւներում Մոսկուան սխալուեց: Հայաստանում «Արցախեան» պահանջատիրական շարժման ստեղծումով Մոսկուան իր նպատակին հասել էր: Իսկ Հայաստանը պէտք է նպաստէր, որ այդ պլանները կատարուէին ի օգուտ հայութեան: Նա կարող էր բայբայիչ գործունէութիւն ծաւալել Ադրբեջանում: Ստեղծէր այնպիսի վիճակ, որ Ադրբեջանն աւելի ու աւելի շատ ձգտէր անկախութեան: Դրա համար հարկ էր, որ Հայաստանը ոչ թէ յետ կանգնէր պահանջատիրութիւնից, այլ խորանար անընդհատ եւ միմիայն այս ուղղութեամբ: Այս դէպքում Հայաստանին անկախութեան կողմ թեքուելուց զսպելու համար աւելի շատ Արցախը կը մօտեցնէին նրան: Եւ այս դէպքում Ադրբեջանն աւելի շատ կը ձգտէր անկախութեան, աւելի շատ սահման բանդելու նման ձեռնարկումներ կ'անէր ու աւելի շատ պահանջներ կը դնէր:

Մոսկուան այդ դէպքում կը խորացնէր Ադրբեջանի ներսում եւ հենց թէկուզ Վրաստանի հետ ունեցած ազգամիջեան կոնֆլիկտները, ինչը կարող էր կրակի մէջ գցել Ադրբեջանին, ստիպելով, որ հրաժարուի Արցախից: Իսկ նրանք արդէն հրաժարուել էին Արցախից. եւ այն ժամանակ, երբ ԽՍՀՄը մեր կողմն էր անցել ու լուծումներ էր փնտրում, միանգամայն անտրամաբանօրէն սկսուեց պահանջատիրութիւնից մեր նահանջը՝ ինչը կարծես թելադրուած լինէր հակառակորդի կողմից: Նահանջը սկսուեց այն ժամանակ, երբ ինչ-որ մարդիկ սկսեցին խոչընդոտել տեղական ընտրութիւնների անցկացմանը: Տեղական ընտրութիւնները եթէ կայանային եւ Հայաստանի իշխանութիւններն էլ վաւերացնէին դրանք, ապա մեծ բայլ էր արուած լինելու միացման ճանապարհին: Եթէ բաղաքական կապերը ամբողջովին կայանում են, տնտեսական ինտեգրացումը կատարուել է, սա արդէն փաստական միաւորում է նշանակում: Այնինչ մենք անկախութեան գաղափարը փոխեցինք Արցախի գաղափարի հետ: Ես ինձ եմ հաւատում, թէ այսպիսի ռազմավարական տարածքը ինքնակամ պետութիւնը կը թողնի ու կը հեռանայ, մանաւանդ, երբ մենք այնպիսի վրտանգաւոր բայլի ենք գնում, որպիսին կողմնորոշման փոփոխումն է: Անկախութեան գաղափարը շուտասելուկի կամ շուտանելուկի պէս բան չէր, կարելի էր այդ ուղղութեամբ առանց աղմկելու նախապատրաստել ժողովրդին, առաջին բայլերն անել այդ ճանապարհին եւ զուգահեռ շարունակել սկսուած գործը, այլ ոչ թէ անսպասելի լրել Արցախը եւ գնալ ուրիշ ուղղութեամբ:

Հարց.- Անցած 1 տարուայ ընթացքում Հայաստանի խորհրդարանը Արցախի վերաբերեալ կայացրել է բազմաթիւ յայտարարութիւններ, ընդունել է որոշումներ: Խորհրդարանը կարողացե՞լ է իր պարտքը Արցախի առաջ կատարել:

Պատ.- Մեր խորհրդարանը Արցախի հարցում արել է այն, ինչ որ կարող էր անել: Մենք մեղադրում ենք նրան ոչ թէ այն պատճառով, որ կարող էր ինչ որ բան անել ու չի արել, այլ նրա համար, որ անկարող է կատարելու այն, ինչն անհրաժեշտ է: Խորհրդարանը չունէր անհրաժեշտ դիւանագիտական հասունութիւն: Շարժման ընթացքում մենք բաղաքականութեամբ զբաղուողներ էինք, որ ձգտում էինք իշխանութեան, բայց արդէն որպէս այդպիսին դու պարտատր ես դիւանագէտ լինել, կարողանալու համար իրականացնել այն խնդիրը, որի համար ձգտել ու դարձել ես իշխանութիւն: Մենք ձգտում ենք նոյնիսկ զիջումների գնով որոշակի կայուն վիճակ ապահովել, բայց չենք կարողանում, որովհետեւ դիւանագէտներ չենք: Հայաստանի իշխանութիւնը չունի դիւանագիտական մեխանիզմներ, թէեւ նման մեխանիզմներ հայ ժողովուրդն ունի արտաքին ու ներքին սփիւռքում: Հարկաւոր էր ստեղծել դիւանագիտական կենտրոններ, եղած ամենը ձուլել, միաւորել ու ծառայեցնել ազգային ընդհանուր նպատակին: Ոչ ոք չի ցանկացել եւ չի արել այս անհրաժեշտ գործը: Երբ խորանում ես, տեսնում ես, որ մենք անընդհատ վերակառուցման գործն ենք արել: Ի՞նչ ենք արել, որ զուտ ազգային է ու չեն արել միւս հանրապետութիւնները: Որեւէ բան, որ կը տանէր մեզ մեր ազգային արմատներին, կը լինէր մեր լեզուի, պատմութեան, մշակոյթի, հաւատի ծնունդը եւ կ'արտայայտէր հայ ժողովրդի ձգտումները: Ամեն մի բայլ ձեռնարկելիս մենք ելնում ենք Արեւմուտքի, Ամերիկայի օրինակներից, մոռանալով, որ սա Հայաստանն է ու եթէ ցանկանում ենք մեզ համար բաղաքական վահան ստեղծել, պէտք է ելակէտ ընդունենք մեր բարոյական, հոգեբանական, մտաւոր առանձնայատկութիւններն ու ինքնատիպութիւնը: Այստեղից պէտք է սկսէր իր գործունէութիւնը Հայաստանի խորհրդարանը եւ ոչ թէ մտնէր վերակառուցման մրցուղի:

Հարց.- Այս մասին հասկանալի պատճառներով սովորաբար աշխատել ենք բարձրաձայն չարտայայտուել: Մեզանում եւ մասնաւորապէս Արցախում ներքին հակամարտութիւններ կա՞ն, որոնք իրենց ազդեցութիւնն են թողնում շարժման վրայ:

Պատ.- Ամենաանհաշտ ազգը միաւորում է մէկ դժբախտութեան ու մէկ էլ յաղթանակների ժամանակ: Արցախում եղած միասնութիւնը աստիճանաբար բայբայում է նախ եւ առաջ հոգեպէս: Մեր բջիջները հիւանդանում են ստրկամտութեան բարոզներից: Քարոզիչները հաշտուել են բարոզում այնպիսի պայմաններում, երբ նոյնիսկ ստրուկը չէր համակերպուի: Ղարաբաղցի հայ մարդը, հայ ռամիկն ու ռանչպարը չի կարող ասել. «Ես համաձայն եմ, եկէք ինձ լլկէք, ինձ սպանէք»: Ահա դրան են ուզում հասցնել, թէեւ կեանքը ցոյց է տալիս, որ անպտուղ ըզբաղմունք է հաշտութիւն բարոզելը:

Կարելի է պետականօրէն նոյնիսկ յայտարարել, որ պատրաստ ես երկխօսութեան, բայց օրինակ ծառայելու համար չի կարելի սուրը ձեռին թշնամու առաջ վիզ ծռել: Հոգեբանական աղճատումը տանում է միասնականութեան բայբայման:

Մէկ այլ կողմից հարցին մօտենանք: Հայաստանում կատարուեց յեղաշրջում, եւ նոր իշխանութիւնները զնացին ժողովրդավարութեան ուղիով՝ ընդունենք: Լաւ, թէ վատ ժողովրդավար են, մի կողմ դնենք, բայց ինչո՞ւ այդ նոյն գործընթացը կանգնեցուեց Արցախում, եւ, ընդհակառակը, կոմունիստներին այստեղ տապալած ժողովրդավարները Արցախում հովանաւորեցին ու գործ բռնեցին տեղի կոմունիստների հետ: Սա դիտատրութիւ՞ն էր, թէ՞ անգիտակցութիւն: Չէ՞ որ տարբեր հասարակական ֆորմացիաներում ապրող մէկ ժողովուրդը չի կարող միաւորուել, ինչպէս որ չէին կարող միաւորուել 2 Գերմանիաները, Կորէաները, Վիետնամները: Ես տուեալ դէպքում կոմունիստների դէմ չեմ խօսում, այլ՝ երեւոյթի: Ազազգային կուսակցութիւնը խրախուսուելով, հովանաւորուելով, աւելի ամրապնդեց իր դիրքերը, պաշտօններում առաջխաղացում ապրեց, միաժամանակ անցնելով շարժման գլուխ, դարձաւ «ազգային» կուսակցութիւն:

Հարց.- Ինչպէ՞ս էք վերաբերւում «Արցախի պայքարը արցախցիների պայքարն է» կարգախօսին:

Պատ.- Դա փարիսեցիական եւ նոյնիսկ դաւաճանական միտք է: Արցախցիների իրաւունքներն են իրենցը, բայց չի կարելի ասել ձեռի պայքարը ձեռի պայքարն է, իսկ մարմինը դրա հետ գործ չունի: Կարո՞ղ է պատահել, որ խփեն-հանեն մէկի աչքը ու նա ասի, թէ «Իմ ինչ գործն է, թող աչքս խօսի»: Մենք մէկ ազգ ենք, եւ Արցախի պայքարը հայութեան պայքարն է: Չէ՞ որ Արցախին խփում են, որովհետեւ Հայաստանը Մոսկուային ձեռնտու բաղաքականութիւն չի վարում: Ուրեմն Արցախը կրում է այն հարուածը, որը պէտք է կրէր Հայաստանը եւ դա նշանակում է, որ թշնամին այս երկուսին համարում է մէկ մարմին: Մենք մէկ ազգ ենք, եւ Արցախի պայքարը հայութեան պայքարն է: